Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 25-ի N706 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի N60-Ա- N76-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1.N64-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին, բացի այդ որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

2.N66-Ա որոշման բավանդակությունում «2021» թվի փոխարեն անհրաժեշտ է գրառել «2022» թիվը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
19 օգոստոսի 2022թ.

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 64-Ա որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջին, համաձայն որի համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին։

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 75-Ա որոշման մեջ հողում կատարված չէ ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23^1-րդ կետին, ուստի հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի իրավաչափության վերաբերյալ։

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ թիվ 68-Ա, 69-Ա, 70-Ա, 71-Ա, 72-Ա և 73-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Զ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.07.2022թ.

Կատարող՝ Է. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 25-ի N 706 գրությամբ ներկայացված համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի N 6 արտահերթ նիստի թիվ, թիվ 61-Ն, 63-Ա, 65-Ա, 66-Ա և 67-Ա որոշումների վերաբերյալ.

Թիվ 61-Ն որոշման բովանդակության 1-ին կետում գրառված «22104.9.0» թիվը փոխարինել «22104.9» թվով:

Որոշման բովանդակության 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերում գրառված «կապիտալ նորոգում» բառերը փոխարինել «կապիտալ վերանորոգում)» բառերով:

Որոշման բովանդակության 11-րդ կետում գրառված «300.0» և «400.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «400.0» և «500.0» թվերով:

Թիվ 63-Ա որոշման նախաբանում գրառված «դրույթներով» բառը փոխարինել «դրույթով» բառով:

Թիվ 65-Ա որոշման հավելվածի աղյուսակի 4-րդ սյունակի վերնագրում գրառված «ամիս,» բառը փոխարինել «օր,» բառով: Հավելվածի աղյուսակի 10-րդ տողի 4-րդ սյունակում գրառված «17.11.2021» թվերում առկա է անհամապատասխանություն:

Թիվ 66-Ա որոշման նախաբանում «ենթակետերը» բառից հետո գրառել «18-րդ կետով» թիվը և բառը, իսկ որոշման բովանդակությունում գրառված «2021» թիվը փոխարինել «2022» թվով:

Թիվ 67-Ա որոշման բովանդակությունում «ընթացքում» բառից հետո գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի» բառերը: Բացի այդ որոշման բովանդակությունում նշված չէ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի համապատասխան որոշման (որոշումների) օրը, ամսաթիվը, տարեթիվը և որոշման համարը (համարները):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի N 6 արտահերթ նիստի թիվ, թիվ 60-Ա, 62-Ն, 74-Ա և 76-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

28.07.2022թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան